

Boston

Թիւ 1997  
Մարտ 20, 1961

Արժանաշնորհ  
Տ. Բարսեղէն ԲՀՆԵՅ. Մազսուտեան  
Հոգեւոր Հովիւ եւ Նախագահ Միական Խորհուրդի  
Ս. Կրթութեան Թիւն Եկեղեցւոյ  
Պոստոն.

Սիրելի Տէր Հայր,

Ստացած ենք 1961, Մարտ 10 թուակիր Ձեր տեղեկագիրը, որով  
կը հաղորդէք Ձեր նախագահութեամբ՝ Փետրուար 26ին գումարուած  
Միական Ժողովը կատարած է Միական Խորհուրդի մասնակի ընտրութիւն,  
եւ ներկայացնելով ցուէարկութեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած  
անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր Միական Ժողովը տեղի ունեցած է  
Թեմական Կանոնադրութեանց տրամադրութեանց համաձայն, եւ ընտրուած  
անձերը, իբրեւ Եկեղեցւոյ Նախանձախնդիր եւ նուիրեալ անհրամներ,  
կը վայելեն Ձեր համայնքի ժողովուրդին վստահութիւնը, այսու կը  
վաւերացնենք անոնց ընտրութիւնը, ըստ հետեւեալին.-

- Տիարք՝ ճան Սուրսուրեան
- Փիթըր Աղամեան
- Խորէն Խօլլիկեան
- Զօր. Սարգիս Զարդարեան
- Արթըր Նաճարեան
- Արամ Հինդլեան

Օրհնելով նորընտիր անդամները՝ կը մաղթենք Ձեզի եւ պատ-  
ուարժան Միական Խորհուրդիդ յաջող եւ արդիւնաւոր գործունէութիւն,  
ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի շինութիւն համայնքիդ մեր սի-  
րեցեալ ժողովուրդին:

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ  
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐՁԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի